Հաստատված է
ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և
հրդեհային անվտանգության տեսչական
մարմնի կառավարման խորհրդի
2020 թվականի նոյեմբերի 30-ի N 3 Լ որոշմամբ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ
ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ

ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն…… 3

1.Տրանսպորտի անվտանգության բնագավառ……. 5

1.1 Վերահսկողության ոլորտի առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

1.2 Ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումներ

2. Էներգետիկայի բնագավառ և էներգասպառման ոլորտ…….. 11

2.1 Վերահսկողության ոլորտի առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

2.2 Ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումներ

3. Տեխնիկական և հրդեհային անվտանգության ապահովման բնագավառ….. 16

3.1 Վերահսկողության ոլորտի առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

3.2 Ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումներ

4. Քաղաքաշինության բնագավառ…… 20

4.1 Վերահսկողության ոլորտի առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

4.2 Ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումներ

5. Գեոդեզիայի, քարտեզագրման և հողօգտագործման բնագավառ…… 25

5.1 Վերահսկողության ոլորտի առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

5.2 Ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումներ

6. Ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ժամանակացույց 28

7. Կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների իրականացման ժամանակացույց……... 33

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) 2021 թվականի տարեկան գործունեության ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) մշակման համար հիմք են հանդիսացել «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16–ի թիվ 650-Լ որոշմամբ սահմանված 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11–ի թիվ 730-Լ որոշմամբ հաստատված Տեսչական մարմնի կանոնադրության դրույթները և այլ իրավական ակտեր:

Ծրագիրը ներառում է Տեսչական մարմնի նպատակները և իր կողմից վերահսկվող ոլորտներում իրավիճակի վերլուծությունը, առկա հիմնախնդիրների բացահայտումը, նախատեսված կանխարգելիչ (այդ թվում իրազեկման) միջոցառումները, դրանց իրականացման ժամանակացույցը և ակնկալվող արդյունքը:

Տեսչական մարմնի նպատակն օրենքով սահմանված դեպքերում և կարգով քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտներում անվտանգության և օրենսդրության պահանջների պահպանման ապահովումն է:

Տեսչական մարմնի խնդիրներն են քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտներում ռիսկերի կառավարումը և Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանումը, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումների իրականացումը քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտներում:

Դրանց կարգավորման ուղղությամբ 2020 թվականի ընթացքում կատարված աշխատանքը լուսաբանվել է զանգվածային լրատվամիջոցներով: Գործունեության հրապարակայնությունը և թափանցիկությունն ապահովելու նպատակով՝ Տեսչական մարմինն իր կողմից վերահսկողական և օրենքով սահմանված այլ գործառույթների իրականացման վերաբերյալ մշտապես թարմացվող մանրամասն տեղեկատվություն է ներկայացնում իր պաշտոնական ինտերնետային կայքում: Այս ուղղությամբ ձեռնարկված քայլերը կրում են հետևողական բնույթ և նպաստում են հանրության

շրջանում կառույցի դերի վերաբերյալ իրազեկվածության ընդլայնմանը և վերջինիս նկատմամբ վստահության ձևավորմանը:

Հաշվի առնելով Տեսչական մարմնի կողմից կարգավորվող խնդիրների կենսական նշանակությունը հանրության համար՝ թեժ գծի հեռախոսահամարով մշտապես տրամադրում է տեղեկատվություն և խորհրդատվություն: Տեսչական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում ստեղծված է հնարավորություն էլեկտրոնային դիմում ներկայացնելու համար, որը միտված է դիմումների քննարկման գործընթացը առավել թափանցիկ և վերահսկելի դարձնելուն:

Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտում առկա խնդիրների համակողմանի և արհեստավարժ լուծումը պահանջում է լրացուցիչ ռեսուրսներ՝ թե՛ մարդկային, թե՛ տեխնիկական: Առաջնահերթությունների թվում է մարդկային կապիտալի զարգացման նպատակով մասնագիտական վերապատրաստումների (այդ թվում՝ միջազգային) կազմակերպումը:

2020 թվականի տարեկան գործունեության ծրագրով սահմանված, սակայն Հայաստանի Հանրապետությունում ստեղծված իրակիծակի հետևանքով չիրականացված միջոցառումները ևս ներառվել են 2021 թվականի տարեկան գործունեության ծրագրում:

Վերահսկողության ոլորտների առկա խնդիրները և ռիսկերը, ինչպես նաև դրանց նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումներն Ծրագրում առանձնացված են ըստ բնագավառների:

1. ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

1.1 Վերահսկողության ոլորտի առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

2021 թվականի գործունեության ծրագիրը ընդգրկում է նախորդ տարվա ընթացքում Տեսչական մարմնի կողմից տրանսպորտի ոլորտում կատարված հսկողական, վերահսկողական միջոցառումների, այդ թվում ստուգումների շնորհիվ բացահայտված հետևյալ ռիսկերի հետևողական նվազեցմանն ուղղված միջոցառումները:

1. Ավտոբուսներով (միկրոավտոբուսներով) միջպետական ուղևորափոխադրումների իրականացումը կանոնակարգվում է ՀՀ կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի «ՀՀ տարածքից ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների և ուղեբեռների միջպետական փոխադրումների իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1587-Ն որոշման պահանջներով: Անհրաժեշտ է ապահովել բացառապես տվյալ միջպետական երթուղու մրցույթով ընտրված տրանսպորտային միջոցների շահագործումը, ուղևորների անվտանգությունը և սպասարկման պատշաճ մակարդակը:

2. Տրանսպորտային միջոցների կուտակման վայրերից իրականացվող տաքսամոտորային ուղևորափոխադրումների խնդիրները պայմանավորված են առանց լիցենզիայի, առանց համապատասխան կահավորման, առանց սակաչափիչի կամ էլեկտրոնային հավելվածով գործող գնացուցակի ծառայության մատուցմամբ: 2020թ. ընթացքում տվյալ ուղևորափոխադրումների սպասարկման կազմակերպման գործընթացի նկատմամբ, ինչպես քաղաքացիների կողմից ահազանգած բողոքների հիման վրա, այնպես էլ իրականացված մշտադիտարկումների և վերահսկողական գործառույթների արդյունքում նշված իրավախախտումների նկատմամբ օրենքով սահմանված կարգով կազմվել են վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ընդհանուր թվով 30 արձանագրություն, որից 8-ը՝ մայրաքաղաքում, 20-ը՝ մարզերում: Տաքսամոտորային փոխադրումներում տիրող իրավիճակը բերում է այն եզրակացությանը, որ դաշտը զարգանում է տարերայնորեն և անհրաժեշտ են գործոն միջոցներ այն կարգավորելու համար:

3. ՀՀ տարածքում «Հայավտոկայարան» ՓԲ ընկերության ենթակայության ավտոկայարաններում, ավտոկայաններում և երթակարգավարական կետերում միջմարզային, ներմարզային, կանոնավոր ուղևորափոխադրումների բնագավառի խնդիրները վերաբերում են երթուղիների սպասարկման չվացուցակներով հաստատված փոխադրումների կազմակերպման ժամային գրաֆիկի պահպանման, ավտոկայարանային ծառայությունների մատուցման, ուղեբեռի ժամանակավոր

պահպանման, ուղևորների նստեցման և երթևեկության անվտանգության ապահովման կազմակերպման գործընթացներին։ 2020թ. ընթացքում տրանսպորտային օրենսդրության պահանջների խախտումների վերաբերյալ կազմվել են վերահսկողական արդյունքների ամփոփման ընդհանուր թվով 177 արձանագրություններ, որից 31-ը չվացուցակների խախտումների վերաբերյալ։ Անհրաժեշտ վերահսկողական գործառույթների և համատեղ աշխատանքի շնորհիվ պետք է հասնել «Հայավտոկայարան» ՓԲ ընկերության կողմից 27.12.2007թ. ՀՀ կառավարության «Ավտոկայարանային գործունեության կազմակերպման կարգը հաստատելու մասին» թիվ 1604-Ն որոշման պահանջների լիարժեք և արդյունավետ կատարմանը։

4. Ներհամայնքային կանոնավոր երթուղիների պատշաճ սպասարկումն ապահովելու համար Երևան քաղաքում և հանրապետության մյուս խոշոր բնակավայրերում անհրաժեշտ է լրացուցիչ և ավելի խիստ վերահսկողական մեխանիզմների կիրառում, քանի որ 2020թ. նույն իրավիճակում իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում Երևան քաղաքում կազմվել է վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ընդհանուր թվով 109 արձանագրություն։

5. Քաղաքացիներից և տնտեսավարող սուբյեկտներից ստացված դիմում-բողոքներում բարձրացված հարցերը հիմնականում վերաբերում են միջմարզային կանոնավոր երթուղիների սպասարկման չվացուցակների անհստակությանը, զուգահեռ շահագործվող երթուղիների չվացուցակների կրկնություններին, փոխադրողների կողմից չվացուցակների պահանջների պարբերաբար խախտումներին, ինչպես նաև կանոնավոր որոշ երթուղիների ուղեգծերով բազմաթիվ ոչ կանոնավոր և ապօրինի տաքսամոտորային տրանսպորտային միջոցներով ուղևորափոխադրումների իրականացմանը։

6. Ծանրաքաշ և (կամ) մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցներով երթևեկման գործընթացների ռիսկայնությունը պայմանավորված է թույլատրելի բեռնվածության զանգվածի գերազանցման հետ, ինչն առաջացնում է ավտոճանապարհների ասֆալտապատ ծածկույթի լուրջ վնասվածքներ, ինչպես նաև պարունակում է լրջագույն ռիսկեր՝ կապված տրանսպորտային միջոցի անվտանգ երթևեկության հետ։ Տվյալ բնագավառի խնդիրների կարգավորման ուղղությամբ 2020 թվականի 2-րդ կիսամյակի ընթացքում իրականացվել են վերահսկողական միջոցառումներ Կոտայքի, Արարատի, Տավուշի, Սյունիքի և Գեղարքունիքի մարզերում, կազմվել է վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ

73 արձանագրություն, ինչը վկայում է խնդրի լրջության մասին: Գործառույթը կրում է շարունակական բնույթ:

7. «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի հոդված 14-ի 2-րդ կետի պահանջով միջպետական երթուղիների ուղևորների տոմսավորումն իրականացվում է բացառապես ավտոկայարանների և ավտոկայանների, ինչպես նաև դրանց հետ պայմանագիր ունեցող այլ կազմակերպության տոմսարկղերից: Օրենսդրության սույն պահանջի անտեսումը առաջացնում է միջպետական տվյալ երթուղով մեկնող ուղևորների պատշաճ սպասարկման և անվտանգության ապահովման ռիսկ, ինչպես նաև խախտվում են հավասար մրցակցության պայմանները:

8. Ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական զննության անցկացման կայանների գործունեության ռիսկերը ուղղակիորեն կապված են տրանսպորտային միջոցների շահագործման և փոխադրումների իրականացման անվտանգության կանոնների խախտումների հետ:

9. ՀՀ միջպետական, հանրապետական և մարզային ենթակայության տեղական նշանակության պետական ավտոճանապարհներին (ներառյալ պաշտպանական գոտիներում) գովազդի (գովազդային վահանակների) տեղադրման օրինականության «Գովազդի մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարման նկատմամբ մշտադիտարկման և վերահսկողության իրականացում, որի ընթացքում հայտնաբերվել են շուրջ 238 ապօրինի տեղադրված գովազդային վահանակներ, որոնցից 73 գովազդակրի տրվել է նախազգուշացում գովազդային վահանակների օրինականացման համար:

10. Համապատասխան մեթոդաբանության հիման վրա կատարված ռիսկայնության հաշվարկի և ստուգաթերթի բացակայությունը խոչընդոտում է ԵԱՏՄ մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 877 որոշմամբ հաստատված «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 018/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջների նկատմամբ հսկողության իրականացմանը:

11. Տրանսպորտային անվտանգության ապահովմանը խոչընդոտող հիմնական պատճառներն են գործող օրենսդրության մեջ առկա բացթողումները և Տեսչական մարմնին վերապահված իրավասությունների շրջանակի որոշակի սահմանափակումները, ինչպես նաև նյութատեխնիկական ռեսուրսների (տրանսպորտային և տեխնիկական այլ միջոցներով հագեցվածություն, ծանրաքարշ բեռնատարներով փոխադրվող բեռնվածքի քաշի կշռման համար անհրաժեշտ համապատասխան կշեռքների ապահովում և այդ նպատակով ավտոճանապարհներին առանձնացված հատուկ գրպանիկների առկայություն,

տրանսպորտային միջոցների տեխնիկական զննման անցկացման և վտանգավոր բեռների փոխադրումների վերաբերյալ Լիազոր մարմնի և «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության տեղեկատվության էլեկտրոնային բազաներին առցանց միացում և այլն) պակասին, աշխատանքների ծավալի անհամապատասխանությունն անձնակազմի թվաքանակին:

1.2 Ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումներ

Տեսչական մարմնի 2021 թվականի գործունեության ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցառումները միտված են Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում առկա խնդիրների վերացմանը, բացահայտված ռիսկերի նվազեցմանը և Տեսչական մարմնի բնականոն գործունեության ապահովմանը:

Նախատեսված հիմնական միջոցառումները ներառում են.

➢ *օրենսդրական դաշտի կարգավորում.* Տեսչական մարմինն իր լիազորությունները և կանոնադրական գործառույթներն ամբողջական ծավալով իրականացնելու համար կարիք ունի օրենսդրական դաշտի հստակ կանոնակարգման: Մասնավորապես՝ ՀՀ Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Պետական սահմանի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ տեսչական մարմնի կողմից պետական սահմանը հատող միջպետական ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների կազմակերպման կանոնակարգման, ինչպես նաև տրանսպորտային օրենսդրության պահանջների կատարման ապահովման նպատակով ներկայացվել են համապատասխան առաջարկություններ:

Միջպետական բեռնափոխադրում իրականացնող ծանրաքաշ մեքենաների նկատմամբ հսկողության արդյունավետության բարձրացման նպատակով՝ Տեսչական մարմինը մասնակցում է ԵԱՏՄ թվային տրանսպորտային միջանցքների էկոհամակարգի ձևավորման շրջանակներում կատարվող աշխատանքներին:

Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի հետ համատեղ մշակվում է «Տրանսպորտի բնագավառի վերահսկողության մասին» օրենքի նախագիծ:

«Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 018/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի, ինչպես նաև ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական զննության անցկացման կայանների գործունեությանը ներկայացվող պահանջների կատարման նկատմամբ ռիսկի վրա հիմնված ստուգումներ իրականացնելու նպատակով անհրաժեշտ է կատարել համապատասխան լրացումներ կատարել ՀՀ կառավարության 2019

թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1697-Ն որոշման մեջ և մշակել տվյալ ոլորտներին առնչվող ստուգաթերթեր:

- տեխնիկական հագեցվածության ապահովում՝ նյութատեխնիկական ռեսուրսների (տրանսպորտային և տեխնիկական այլ միջոցներով հագեցվածություն, ծանրաքարշ բեռնատարներով փոխադրվող բեռնվածքի քաշի կշռման համար անհրաժեշտ համապատասխան կշեռքների ապահովում և այլն)
- *տեսչական մարմնի կադրային հագեցվածության և մարդկային ներուժի զարգացման ապահովում.*
- *միասնական աշխատելաոճի ձևավորում.* Տրանսպորտային անվտանգության վարչության կողմից տարածքային ստորաբաժանումների մասնագետների մասնագիտական գիտելիքների և հմտությունների կատարելագործում.
- *կանխարգելիչ և իրազեկման միջոցառումներ.* վերահսկողության ոլորտներում տնտեսավարող սուբյեկտների և հանրության իրազեկվածության մակարդակի շարունակական բարձրացման համատեքստում նախատեսվում է օգտագործել ԶԼՄ-ների և սոցիալական ցանցերի բոլոր հնարավորությունները, կազմակերպել իրազեկող բնույթի հանդիպում-քննարկումներ տնտեսվարող սուբյեկտների հետ, պատրաստել սոցիալական հոլովակներ, կազմել գրքույկներ (բրոշյուրներ) և բուկլետներ:
- Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի, 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և ՀՀ առողջապահության նախարարի 04.08.2020թ. թիվ 17-Ն հրամանի հավելված 3-ի՝ «Հայաստանի Հանրապետությունում շարունակվող կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով ցամաքային ուղևորատար տրանսպորտի գործունեության ոլորտում կիրառվող ՍԿ N 3.1.2-001-20 սանիտարական կանոններով» սահմանված կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) կանխարգելիչ և սանիտարահակահամաճարակային միջոցառումներին ներկայացվող պահանջների պահպանման ուղղությամբ տեսչական մարմնին վերապահված գործառույթների հստակ և լիարժեք կատարում:

2. ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌ ԵՎ ԷՆԵՐԳԱՍՊԱՌՄԱՆ ՈԼՈՐՏ

2.1 Վերահսկողության ոլորտի առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

2021 թվականի գործունեության ծրագիրը կազմված է նախորդ տարվա ընթացքում Տեսչական մարմնի կողմից էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում իրականացրած տեխնիկական ստուգումների, էներգահամակարգում տեղի ունեցած պատահարների մասնագիտական քննությունների արդյունքում բացահայտված խախտումների պատճառների, էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից իրենց պատկանող էներգատեղակայանքներում տեղի ունեցած պատահարների վերաբերյալ սահմանված կարգով ներկայացրած տեղեկատվությունների վերլուծությունների, քաղաքացիներից և տնտեսվարող սուբեկտներից ստացված դիմում-բողոքների ուսումնասիրությունների արդյունքում բացահայտված խնդիրների և ռիսկերի հիման վրա:

1. Վերջին տարիներին ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգում տեղի ունեցած մահացու ելքով պատահարների, ինչպես նաև ՀՀ քաղաքացիների կողմից ստացված դիմում-բողոքների ուսումնասիրության արդյունքների վերլուծությունից պարզվել է, որ դրանց զգալի մասը տեղի են ունեցել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» («ՀԷՑ») ՓԲԸ-ի կողմից օգտագործվող մի շարք 6, 10/0.4 կՎ լարման ենթակայաններում և 0.4կՎ, 6կՎ, 10կՎ լարման օդային գծերում, որտեղ առկա են էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների, էլեկտրահաղորդաբաշխման, շահագործման անվտանգության և էլեկտրական ցանցերի անվտանգության գոտիների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերով ներկայացված պահանջների կոպիտ խախտումներ: Դրանք փաստացի չեն գտնվում «ՀԷՑ» ՓԲ ընկերության հաշվեկշռում, սահմանված կարգով չեն իրականացվում տեխնիկական սպասարկման, պլանային նորոգման, էներգահամակարգի հարաչափերին չհամապատասխանող սարքավորումների վերականգնման, արդիականացման կամ փոխարինման աշխատանքներ, ընկերությունը պատասխանատվություն չի կրում դրանց անմխիթար վիճակի համար, սակայն դրանք օգտագործվում է ընկերության կողմից իր սպառողներին (բաժանորդներին) էլեկտրաէներգիա մատակարարելու համար: Նշված էլեկտրատեղակայանքները նախկինում պատկանել են այգեգործական ընկերություններին կամ այլ կազմակերպություններին, իսկ այժմ դրանք համարվում են տիրազուրկ:

Առկա են նաև փաստացի տնտեսվարող սուբյեկտներին պատկանող ենթակայաններ, որոնց էլեկտրատեղակայանքները առանց համատեղ շահագործման

և անվտանգության կանոնների պահպանման պարտավորությունների վերաբերյալ կնքված պայմանագրերի միաժամանակ օգտագործվում են նաև «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից իր սպառողներին (բաժանորդներին) էլեկտրամատակարարումն ապահովելու համար:

Ստեղծված իրավիճակը մեծ ռիսկեր է պարունակում՝ սպառնալով մարդկանց կյանքին, գույքին և շրջակա միջավայրին:

2. ՀՀ Էլեկտրաէներգետիկական համակարգում տեղի ունեցած համակարգային բնույթի պատահարների արագ վերականգնմանը երբեմն խոչընդոտում է էներգահամակարգում ռեակտիվ էներգիայի պակասորդի առկայությունը, որի համար պատճառ են հանդիսանում ՀԷԿ-երում հիդրոգեներատորների սինքրոն կոմպենսատորի ռեժիմում աշխատելու և հզորության գործակցի սահմանված չափի ապահովման վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերում դրանց ապահովման պահանջների բացակայությունը:

3. Էլեկտրատեղակայանքների հետ առնչվող վարչատեխնիկական, շահագործող, նորոգող, կարգաբերող, փորձարկող, շինմոնտաժային, օպերատիվ և այլ անձնակազմերի համար տեխնիկական կանոնակարգերում սահմանված են պահանջներ՝ կապված էլեկտրատեղակայանքներում աշխատանքի պայմանների ռիսկերի գնահատման, առողջության, էլեկտրաանվտանգության ապահովման համար անհրաժեշտ և համապատասխան որակավորման խումբ ունենալու հետ, սակայն տվյալ կանոնակարգերում ամբողջովին արտացոլված չեն անձնակազմերի ուսուցման ծրագրերին, էլեկտրաանվտանգության որակավորման խմբերի շնորհման անհրաժեշտ ծավալին և բովանդակությանը ներկայացվող նվազագույն պահանջները, դրանց շնորհման պայմաններն ու կարգը:

Տվյալ խնդրի լուծման համար անհրաժեշտ իրավական դաշտի բացակայությունը, անձնակազմերի ուսուցման և վերապատրաստման ուսումնական կենտրոնների, ինչպես նաև սահմանված կարգով և ժամկետներում գիտելիքների ստուգման և որակավորման խմբերի շնորհման համար իրավասու մշտական գործող հանձնաժողովների բացակայությունը խնդիրներ են առաջացնում տնտեսավարող սուբյեկտների շրջանում, որոնք չեն կարողանում կազմակերպել համապատասխան մասնագետների պատրաստման և վերապատրաստման գործընթացները: Որակավորում ունեցող մասնագետների բացակայությունը հանգեցնում է էլեկտրատեղակայանքների անվտանգ շահագործման ռիսկերի աճին՝ պատճառ հանդիսանալով մարդկանց կյանքին վնասի պատճառմամբ պատահարների առաջացմանը:

4. Էներգատեղակայանքներում տեղի ունեցած պատահարների մասնագիտական քննությունների վերլուծությունները ցույց են տալիս, որ գազամատակարարման բնագավառում մահացու ելքով պատահարների զգալի մասը տեղի են ունենում գազի ներտնային գազասպառման համակարգի ոչ պատշաճ սպասարկման արդյունքում:

5. Օրենքով և ՔՏՀԱՏՄ կանոնադրությամբ վերապահված գործառույթներն իրականացնելու համար ՔՏՀԱՏՄ Էներգետիկայի և էներգասպառման վարչությունում ու տարածքային բաժիններում անհրաժեշտ մասնագիտական հաստիքների ոչ բավարար քանակը հնարավորություն չի ընձեռնում պատշաճ կարգով և որակով իրականացնել նշված գործառույթները, լիարժեք վերահսկողություն իրականացնել, ամբողջությամբ գնահատել և նվազեցնել հնարավոր ռիսկերը: Մասնավորապես, հնարավոր չէ էներգատեղակայանքներում և դրանց օբյեկտներում առկա ռիսկերը բացահայտելու նպատակով անհրաժեշտ քանակությամբ ստուգումների իրականացումը, տարեկան շուրջ 1200 էներգատեղակայանքների գործարկման եզրակացություն տրամադրելու նպատակով տեխնիկական ստուգումների պատշաճ կարգով իրականացումը, էներգատեղակայանքներում տեղի ունեցած պատահարների մասնագիտական քննություններն իրականացնելու համար ստեղծվող հանձնաժողովների կազմերը սահմանված նվազագույն թվով մասնագետներով համալրումը, էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում տեղի ունեցած պատահարների պատշաճ վերլուծությունը, ստացված դիմում-բողոքների ուսումնասիրությունների ու վերապահված այլ գործառույթների և համակարգման այլ գործընթացների պատշաճ իրականացումը:

2.2 Ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումներ

➢ Մատնանշված խնդիրները կարգավորելու համար առաջնային է օրենսդրական փոփոխությունների իրականացումը: Մասնավորապես, անհրաժեշտ է փոփոխություններ և լրացումներ կատարել «Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողության մասին» ՀՀ օրենքում: 2020 թվականին օրենքում կատարվել են որոշակի փոփոխություններ և լրացումներ, որոնք ընդունվել են ՀՀ ազգային ժողովի կողմից: Սակայն տեսչական մարմնի գործառույթներն ավելի արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտություն է առաջացել օրենքում կատարել լրացուցիչ փոփոխություններ և լրացումներ:

Փոփոխությունների և լրացումների անհրաժեշտություն կա նաև ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի «Էլեկտրատեղակայանքների շահագործման անվտանգության կանոններ» տեխնիկական կանոնակարգը

հաստատելու մասին» թիվ 1933-Ն որոշման մեջ, որի շնորհիվ կլուծվի տիրազուրկ էներգատեղակայանքների հետ կապված խնդիրը:

Մարդու կյանքին և առողջությանը վնասի պատճառմամբ պատահարները կանխելու համար պահանջվում է համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից 2005 թվականի հուլիսի 8-ի «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններ» թիվ 95-Ն և ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի ««Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 2399-Ն որոշումների մեջ՝ խստացնելով և հստակեցնելով ներտնային գազասպառման համակարգերի սպասարկմանը ներկայացվող պահանջները: Խնդրի կարգավորմանը կնպաստի նաև ներտնային գազասպառման համակարգերի սպասարկման մենաշնորհի վերացումը և շուկայի ազատականացումը: Նշված փոփոխությունները կհանգեցնեն վերահսկողության մեխանիզմների կատարելագործմանը: 2020 թվականին տվյալ խնդրի լուծման համար կազմակերպվել են մի շարք քննարկումներ շահագրգիռ կազմակերպությունների և իրավասու մարմինների հետ, որի արդյունքում որոշվել է ստեղծել աշխատանքային խումբ վերոնշյալ իրավական ակտերում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու համար: Միաժամանակ գազի ներտնային սպառման անվտանգության մակարդակը բարձրացնելու նպատակով ՔՏՀԱ տեսչական մարմնի կողմից առաջարկվել է ներդնել ներտնային գազասպառման անվտանգության մոնիտորինգ համակարգ:

Վերոնշյալ իրավական ակտերում առաջարկվող փոփոխությունների և լրացումների ընդունման դեպքում անհրաժեշտություն կառաջանա որոշակի փոփոխություններ և լրացումներ կատարել նաև համապատասխան ստուգաթերթերում:

- Էլեկտրատեղակայանքներում համապատասխան մասնագետների մասնագիտական պատրաստվածության մակարդակի բարձրացման համար անհրաժեշտ է ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի Էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոններ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1933-Ն և 2006 թվականի նոյեմբերի 23-ի Սպառողների էլեկտրատեղակայանքների տեխնիկական շահագործման կանոններ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1939-Ն կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ:

Օրենքով և ՔՏՀԱՏՄ կանոնադրությամբ էներգետիկայի ոլորտին վերապահված վերոնշյալ գործառույթները պատշաճ և որակով իրականացնելու համար անհրաժեշտ

է ՔՏՀԱՏՄ Էներգետիկայի և էներգասպառման վարչությունը ու տարածքային բաժինները համալրել համապատասխան մասնագիտական հաստիքներով:

➢ Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1697-Ն որոշմամբ հաստատված ոլորտային ռիսկի աստիճանը, ինչպես նաև տեղի ունեցած պատահարների վիճակագրությունը՝ 2020 թվականին ստուգումների տարեկան ծրագրում առաջնահերթությունը տրվել էր էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտներին (մասնաճյուղերին) և իրենց պատկանող էներգատեղակայանքներին: Պայմանավորված ՀՀ-ում ստեղծված իրավիճակով՝ 2020 թվականի ընթացքում կատարվել է նախատեսված ստուգումների շուրջ 50 տոկոսը: Մնացած աշխատանքը տեղափոխվել է և կիրականացվի 2021 թվականին: Իսկ 2020 թվականին ստուգված բոլոր օբյեկտները կենթարկվեն վերստուգումների:

Կանխարգելիչ և իրազեկման միջոցառումներ. վերահսկողության ոլորտներում տնտեսավարող սուբյեկտների և հանրության իրազեկվածության մակարդակի շարունակական բարձրացում:

3. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

3.1 Վերահսկողության ոլորտի առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1697-Ն որոշմամբ հաստատված ոլորտային ռիսկերի աստիճանները և արձանագրվող հրդեհների վիճակագրությունը՝ 2020 թվականի ստուգումների տարեկան ծրագիրը կազմելիս՝ շեշտը դրվել էր ներքոհիշյալ բարձր ռիսկային ոլորտներում առկա խնդիրները բացահայտելու և անվտանգությունն ապահովելու վրա։ Դրանք են՝

- ✓ արտադրական նշանակության օբյեկտներ,
- ✓ բենզալցակայաններ և գազալցավորման կայաններ,
- ✓ առևտրի և հասարակական սննդի օբյեկտներ,
- ✓ պայթուցիկ նյութերի, նավթամթերքների, հեղուկ և բնական գազերի պահեստներ,
- ✓ հրդեհապայթունավտանգ օբյեկտներ,
- ✓ հեղուկ վառելիքի, գազի, փայտանյութի և այլ այրվող նյութերի կուտակման վայրեր։

Սակայն 2020 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում հայտարարված արտակարգ դրությամբ և ապա ռազմական դրությամբ պայմանավորված՝ Տեսչական մարմինը 2020 թվականի ընթացքում իրականացրել է տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների շուրջ 50 տոկոսը։

2. 2020 թվականի ծրագրով նախատեսված և ըստ անհրաժեշտության կատարված ստուգումները բացահայտեցին գործող ստուգաթերթերի լրամշակման անհրաժեշտությունը։ Միաժամանակ, Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ է մշակել նոր ստուգաթերթեր և համապատասխան լրացումներ և փոփոխություններ կատարել ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և

ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1697-Ն որոշման մեջ:

3. 2020 թվականի ընթացքում նախատեսված էր կազմակերպել հրդեհատեխնիկական հետազոտություններ նախադպրոցական հաստատություններում: Սակայն, ՀՀ-ում ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ հետազոտությունները հիմնականում չեն կատարվել: Տեսչական մարմինը նախատեսում է 2021 թվականին իրականացնել բաց թողնվածը:

4. 2020 թվականի ընթացքում ամռան ամիսներին մանկական հանգստյան ճամբարները չեն գործել՝ կապված նոր կորոնավիրուսային վարակի (COVID-19) տարածման հետ: Նախատեսվում է 2021 թվականին իրականացնել նպատակային հրդեհատեխնիկական հետազոտություններ ՀՀ տարածքում գործող բոլոր մանկական հանգստյան ճամբարներում՝ հանգստացող երեխաների անվտանգությունն ապահովելու, ծանր հետևանքով հրդեհներից խուսափելու նպատակով:

5. Տեսչական մարմնի նախաձեռնությամբ 2020 թվականի ընթացքում Երևան քաղաքի 189 բենզալցավորման կայաններում իրականցվել են հրդեհատեխնիկական հետազոտություններ: Դրանց արդյունքում բացահայտվել է 578 խախտում, որոնք հիմնականում վերաբերում են ԲԼԿ-ներին պատկանող շինությունների միջև, ինչպես նաև ԲԼԿ-ներից մինչև հարակից շենք, շինությունները պահանջվող միջտարածությունների չպահպանմանը:

3.2 Ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումներ

- Անհրաժեշտ է մշակել և ներկայացնել Տեսչական մարմնի բնականոն գործունեությունն ապահովող *օրենսդրական փոփոխություններ,* որոնք կներառեն փոփոխություններ <<Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին>> ՀՀ օրենքում, <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> օրենսգրքում, ինչպես նաև ՀՀ կառավարության 2019թ. օգոստոսի 8-ի <<ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու և ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին>> N 1025-Ն որոշմամբ հաստատված հավելվածներում:

2021 թվականին Տեսչական մարմինը կշարունակի իր ուսումնասիրությունները բենզալցավորման կայաններում վեր հանված հարցերի լուծումները գտնելու համար: Կուսումնասիրվի այդ ոլորտում առկա միջազգային փորձը, գործող նորմատիվ իրավական փաստաթղթերը ոչ միայն Ռուսաստանի Դաշնության, այլև եվրոպական

մի շարք երկրների: ՈՒսումնասիրությունների արդյունքներով կարվեն առաջարկություններ՝ նորմատիվ իրավական փաստաթղթերում համապատասխան փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

➢ Պայմանավորված ՀՀ-ում ստեղծված իրավիճակով՝ 2020 թվականի ընթացքում կատարվել է նախատեսված ստուգումների շուրջ 50 տոկոսը: Մնացած աշխատանքը ներառվել է 2021 թվականի ստուգումների տարեկան ծրագրում: 2020 թվականին ստուգված բոլոր այն տնտեսավարող սուբյեկտների մոտ, ում տրված պարտադիր կատարման կարգադրագրերով սահմանված ժամկետները լրանալու են 2021 թվականին, կիրականացվեն վերստուգումներ:

➢ *Դինամիկ քարտեզի հնարավորությամբ DATABASE MANAGEMENT SYSTEM ծրագիրն* էապես կթեթևացնի Տեսչական մարմնի կողմից կատարվող աշխատանքը՝ միաժամանակ բացառելով կրկնվող տեղեկատվության մուտքագրումը և ռիսկի հաշվարկի սուբյեկտիվությունը, շահերի բախումը: Ծրագրին կից դինամիկ քարտեզը հնարավորություն կտա տեսնելու նախագծված (գործող) օբյեկտի տեղակայումը իրեն շրջապատող այլ օբյեկտների նկատմամբ, դրանց միջև հակահրդեհային միջտարածությունները, կառույցների հրդեհավտանգավորության աստիճանը: Ստուգումների ընթացքում Տեսչական մարմնի աշխատակիցները վերահսկում են նաև ստուգվող օբյեկտի շրջակայքում գտնվող հիդրանտների սարքինության վիճակը՝ համագործակցելով ԱԻՆ փրկարար ծառայության հետ: Ստացված տեղեկատվությունը քարտեզի վրա արտացոլելով՝ տեսանելի կդառնա տարածքների ապահովվածությունը հիդրանտներով, ինչը իր հերթին հնարավորություն կտա Տեսչական մարմնի ուշադրությունը նպատակաուղղել դեպի առավել ռիսկային օբյեկտներ՝ ապահովելով հասարակության անվտանգությունը վերահսկվող բնագավառներում:

➢ Վերահսկողական աշխատանքների ծավալը և արդյունավետությունը անմիջականորեն կախված են հրդեհային և տեխնիկական հսկողություն իրականացնող *մասնագետների քանակից և արհեստավարժությունից*: Տեսչական մարմնի կառուցվածքային վարչությունը նախատեսում է պարբերաբար կազմակերպել տարածքային ստորաբաժանումների համապատասխան աշխատակիցների վերապատրաստումներ:

➢ Հրդեհների և տեխնածին վթարների կանխարգելման, դրանց հետևանքով հասարակությանը և տնտեսությանը հասցվող վնասների ռիսկի նվազեցման, ինչպես նաև կառույցի նկատմամբ վստահությունը բարձրացնելու նպատակով կառուցվածքային ստորաբաժանման կողմից կկազմակերպվեն հանդիպում-քննարկումներ ՀԿ-ների և ԶԼՄ-ների մասնակցությամբ: Քաղաքացիների և

տնտեսավարող սուբյեկտների իրավագիտակցությունը բարձրացնելու նպատակով կպատրաստվեն և կտարածվեն բուկլետներ ու բրոշյուրներ: Իրազեկման աշխատանքների շրջանակում նախատեսվում է նաև սոցիալական հոլովակների նկարահանում և տարածում:

- Ստուգումների և հետազոտությունների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով նախատեսվում է սերտորեն *համագործակցել* ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության հետ:

4. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

4.1 Վերահսկողության բնագավառի առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

1. Տեսչական մարմնի կողմից 2020 թվականի ընթացքում իրականացված ստուգումները և վերահսկողական միջոցառումները ցույց են տվել, որ քաղաքաշինական գործունեություն իրականացնող սուբյեկտները շինարարական աշխատանքները կատարում են համաձայնեցված նախագծից և նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի պահանջների շեղումներով:

2. Դիմում-բողոքների, ինչպես նաև պետական մարմինների կողմից ներկայացված գրությունների հիման վրա կատարված դիտարկումների շնորհիվ՝ համայնքների կողմից տրամադրվող քաղաքաշինական փաստաթղթերում բացահայտվեցին բազմաթիվ տարաբնույթ թերություններ և բացթողումներ: Մասնավորապես համայնքների ղեկավարների կողմից տրամադրվում և համաձայնեցվում են սահմանված կարգի խախտումով նախագծման և շինարարության թույլտվություններ ու համաձայնեցվում են նախագծման թույլտվությանը անհամապատասխան աշխատանքային նախագծեր: Ակնհայտ է ՀՀ համայնքներում, ՀՀ մարզպետարաններում և Երևանի վարչական շրջաններում քաղաքաշինական գործունեության նկատմամբ տարեկան տեխնիկական ստուգումների անհրաժեշտությունը, որոնք հնարավոր կլինի իրականացնել ՀՀ կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողություն իրականացնելու կարգը սահմանելու մասին» թիվ 624 որոշման մեջ համապատասխան փոփոխություններ և լրացում կատարելուց հետո:

3. ՀՀՇՆ 30-10-2014 «Քաղաքաշինություն քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին 2014 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 263-Ն հրամանում առկա միջտարածությունների հետ կապված նորմատիվ պահանջները՝ գոյություն ունեցող քաղաքաշինական միջավայրում (արդեն իսկ բնակելի տներով կառուցապատված միջավայր), կառուցապատողների համար ստեղծում են կառուցապատման հետ կապված խնդիրներ: Մասնավորապես կառուցապատողների կողմից անհնարին է դառնում սեփականության իրավունքով իրենց պատկանող բնակելի տան փոխարեն կառուցել նորը կամ վերակառուցել գոյություն ունեցող բնակելի տունը, քանի որ անհնար է պահպանել առկա իրավական ակտերով սահմանված հեռավորությունները:

4. Կառուցվող բազմաբնակարան շենքերի ստորգետնյա հարկերում բնակիչների համար նախատեսված ավտոկայանատեղիների ոչ բավարար լինելու պատճառով կից տարածքներում ավտոմեքենաների կայանման պատճառով ներհամայնքային ճանապարհները դառնում են դժվար անցանելի և առաջանում են խցանումներ: Ներկա պահին ՀՀ գործող իրավական ակտերով նախատեսված է մինչև 40% կառուցապատում, որը չի բավարարում բազմաբնակարան շենքի բնակիչներին:

5. Ստուգումները դեպի առավել ռիսկային ոլորտներ նպատակաուղղելու համար անհրաժեշտ է կատարել հաշվարկներ՝ ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1697-Ն որոշմամբ սահմանված չափորոշիչների հիման վրա: Սակայն պահանջվող տեղեկատվությունը համայնքների ղեկավարներից ներկայացվում է թերի և ուշացումով:

7. Վերահսկողական աշխատանքների ծավալը և արդյունավետությունը անմիջականորեն կախված են հսկողություն իրականացնող *մասնագետների քանակից և արհեստավարժությունից*:

4.2 Ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումներ

➢ 2021 թվականի ընթացքում նախատեսվում է ավարտին հասցնել 2020 թվականին նախաձեռնած *օրենսդրական փոփոխությունները* հետևյալ իրավական ակտերում՝

- «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում և «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» ՀՀ օրենքում Տեսչական մարմնին վերապահված հոդվածների պատասխանատվության գումարային սահմանային շեմը բարձրացնելու վերաբերյալ, որը կնպաստի քաղաքաշինական գործունեություն իրականացնող սուբյեկտների կողմից քաղաքաշինական օբյեկտներում իրենց կողմից իրականացվող քաղաքաշինական գործունեության որակի բարձրացմանը և խստացնի նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի պահանջների կատարման ապահովումը և պահպանումը.

- ՀՀ կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 18-ի Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողություն իրականացնելու կարգը սահմանելու մասին թիվ 624 որոշման մեջ, ինչը հնարավորություն կտա Տեսչական մարմնին իրականացնել ՀՀ համայնքներում, ՀՀ մարզպետարաններում և Երևան համայնքի վարչական շրջաններում իրականացնել տեսչական ստուգումներ.
- ՀՀՇՆ 30-10-2014 «Քաղաքաշինություն քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին 2014 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 263-Ն հրամանում առկա միջտարածությունների հետ կապված նորմատիվ պահանջների վերանայման վերաբերյալ ներկայացնել առաջարկ՝ գոյություն ունեցող քաղաքաշինական միջավայրում (արդեն իսկ բնակելի տներով կառուցապտված միջավայր) տնտեսավարող սուբյեկտների կողմից անխոչընդոտ կառուցապատում իրականացնելու նպատակով:
- 30-10-2014 «Քաղաքաշինություն քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին 2014 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 263-Ն և ՀՀՇՆ 30-01-2014 «Բազմաբնակարան բնակելի շենքեր» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին 2014 թվականի մարտի 31-ի թիվ 93-Ն հրամաններում առկա կառուցապատման տոկոսի հետ կապված նորմատիվ պահանջների վերաբերյալ ներկայացնել առաջարկ բազմաբնակարան և բազմաֆունկցիոնալ շենքերի կառուցման ժամանակ ստորգետնյա հարկերի (կայանատեղի) կառուցապատման տոկոսի սահմանային չափի բարձրացնելու վերաբերյալ: Սույն հրամանում բազմաբնակարան շենքերի ստորգետնյա հարկերի (կայանատեղի) կառուցապատման տոկոսի բարձրացումը որոշ չափով կնպաստի ներկա պահին համայնքներում բնակելի կառուցապատման շրջաններում փողոցների անցանելիության և ավտոմեքենաների բնականոն տեղաշարժման ու կայանման խնդիրները:

➢ Անհրաժեշտ է սահմանել վերահսկողություն համայնքներում գոյություն ունեցող վարչական շենքերի, թատրոնների, թանգարանների, պետական հիմնարկների, կինոթատրոնների և այլ պետական կառավարման և տեղական

կառավարման հիմնարկների հաշմանդամ և սակավաշարժ խմբերի տեղաշարժման մատչելիությունն ապահովելու նկատմամբ: Տեսչական մարմնի կողմից առաջարկ կներկայացվի համայնքների կողմից տարեկան բարեկարգման ծրագրերում ներառել համայնքներում գոյություն ունեցող վարչական շենքերի, թատրոնների, թանգարանների, պետական հիմնարկների, կինոթատրոնների և այլ պետական կառավարման և տեղական կառավարման հիմնարկների վերանորոգման կամ բարեկարգման նախագծահաշվարկային փաստաթղթերում հնարավորության պարագայում ներառել հաշմանդամ և սակավաշարժ խմբերի տեղաշարժման մատչելիության ապահովման միջոցառումներ: Միաժամանակ Տեսչական մարմինը 2021 թվականի ընթացքում հսկողություն կսահմանի հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի պայմանների ապահովման նկատմամբ ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 1601-Լ որոշմամբ հաստատված ցանկի մեջ ներառված շենքերի կառուցման կամ վերանորոգման շինարարական աշխատանքների ժամանակ՝ ստուգումների և ուսումնասիրությունների միջոցով:

- 2021 թվականի տարեկան ստուգումներին ընդառաջ վերապատրաստել ստորաբաժանումների աշխատակիցներին քաղաքաշինության բնագավառում *ստուգում իրականացնելու ուղեցույցով*: Նախատեսվում է նաև միասնական աշխատելաոճ ձևավորելու նպատակով մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանման կողմից իրականացնել տարածքային ստորաբաժանումների մասնագետների մասնագիտական գիտելիքների և հմտությունների կատարելագործում: Հնարավորության դեպքում կկազմակերպվեն վերապատրաստումներ նաև կրթական հաստատությունների (հատկապես, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի) դասախոսների մասնակցությամբ:
- Վերահսկողական աշխատանքների ծավալը և արդյունավետությունը անմիջականորեն կախված են ոչ միայն հսկողություն իրականացնող մասնագետների արհեստավարժությունից, այլև քանակից: Հետևաբար, *հաստիքների ավելացումը* հնարավորություն կստեղծի քաղաքաշինության բնագավառում հասարակության անվտանգությունն ապահովելու համար:
- Կարևորելով Տեսչական մարմնի գործունեության վերաբերյալ հասարակության *տեղեկացվածության մակարդակի շարունակական բարձրացումը*՝ նախատեսվում է օգտագործել ԶԼՄ-ների և սոցիալական ցանցերի բոլոր հնարավորությունները: Վերահսկողության բնագավառում առկա խնդիրները կարգավորելու, հետագայում դրանք բացառելու նպատակով կկազմակերպվեն հանդիպում-քննարկումներ շահագրգիռ պետական մարմինների և տնտեսավարող սուբյեկտների հետ:

5. ԳԵՈԴԵԶԻԱՅԻ, ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐ

5.1 Վերահսկողության բնագավառի առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

1. 2020 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված, ինչպես նաև դիմումների, գրությունների հիման վրա և ՀՀ Վարչապետի հանձնարարությամբ ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման համապատասխանության նկատմամբ իրականացված ստուգումների վիճակագրությունը վկայում է, որ հողերի նպատակային նշանակության, գործառնական նշանակության, ապօրինի զավթման, աճուրդների և վարձակալության խախտումները շարունակում են մնալ հիմնական ռիսկային ուղղությունները: Բնագավառի առաջնային խնդիրներից է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիների դիմում-բողոքներին ոչ պատշաճ ընթացք տալը: Առաջնային խնդիրներից է նաև տնտեսվարող սուբյեկտների կողմից օրենսդրությանը հակասող վարքագիծ դրսևորելու դեպքերում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների անգործության դրսևորումը:

2. 2020 թվականի ընթացքում ստացված դիմում-բողոքներից շատերը վերաբերում են հերթապահ կադաստրային քարտեզների վարման աշխատանքների խախտումներին: Համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի թիվ 1071-Ա որոշման՝ քարտեզագրական աշխատանքների նկատմամբ վերահսկողություն իրականացնող լիազոր մարմին է ճանաչվել Տեսչական մարմինը: Միևնույն ժամանակ կատարվել են փոփոխություններ «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածում, համաձայն որի գեոդեզիական և քարտեզագրական գործունեության պետական տեսչական վերահսկողությունը կիրականացնի ՀՀ ՔՏՀԱ տեսչական մարմինը: Հոդվածով սահմանված գործառույները իրականացնելու համար պահանջվում է կատարել շտկումներ ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 730-Լ որոշմամբ հաստատված ՀՀ ՔՏՀԱ տեսչական մարմնի կանոնադրության մեջ:

3. Համապատասխան մեթոդաբանության և ստուգաթերթերի բացակայության պատճառով Տեսչական մարմինը չի կարողանում իրականացնել ստուգումներ գեոդեզիայի և քարտեզագրության ոլորտներում:

4. Գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության ոլորտում վարչական իրավախախտումների համար կիրառվող պատասխանատվության միջոց տուգանքների չափերը համաչափ չեն թույլ տրված խախտումներին, ուստի անհրաժեշտ է սահմանել տուգանքների ավելի մեծ չափեր՝ ոլորտում տեղի ունեցող խախտումների դեմ առավել արդյունավետ պայքարելու և հետագա հնարավոր խախտումները կանխելու համար:

5. Վերահսկողական գործառույթների իրականացումը ամբողջ ծավալով հնարավոր չէ ապահովել անձնակազմի սակավաթիվ լինելու հետևանքով, հատկապես բացասաբար է ադրադառնում տեխնիկական սարքերով (էլեկտրոնային տախեոմետր և GPS ռովեր կայան) աշխատելու ունակություններ ունեցող մասնագետների բացակայությունը:

5.2 Ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումներ

➢ *Օրենսդրական դաշտի կարգավորման շրջանակում* անհրաժեշտ է վերանայել հողօգտագործման բնագավառում խախտումների համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված տուգանքների չափերը:

2021 թվականին կներկայացվեն առաջարկներ ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 730-Լ որոշմամբ հաստատված ՀՀ ՔՏՀԱ տեսչական մարմնի կանոնադրության մեջ համապատասխան շտկումներ կատարելու վերաբերյալ, ինչը հնարավորությունն կտա Տեսչական մարմնին իրականացնել վերահսկողություն նաև

- գեոդեզիական և քարտեզագրական գործունեության բոլոր սուբյեկտների կողմից գեոդեզիայի և քարտեզագրության բնագավառում նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի պահանջների պահպանման նկատմամբ.
- Հայաստանի Հանրապետության տարածքի գեոդեզիական կետերի և վարչատարածքային միավորների սահմանանիշերի հաշվառման, պարբերաբար հետազոտման և դրանց պահպանմանն ուղղված միջոցառումների նկատմամբ.
- գեոդեզիական աշխատանքների չափաբանական ապահովման, սերտիֆիկացման և ստանդարտների պահպանման նկատմամբ.
- Հայաստանի Հանրապետության պետական սահմանի և վարչատարածքային միավորների սահմանագծման և սահմանազատման աշխատանքների նկատմամբ.
- քարտեզների և հատակագծերի վրա աշխարհագրական անվանումների ճիշտ արտահայտման նկատմամբ.
- պետական և տեղական նշանակության (գերատեսչական) քարտեզագրագեոդեզիական ֆոնդերի պահպանման, նյութերի և տվյալների բազմացման ու օգտագործման, տեղեկատվության տրամադրման նկատմամբ:

➢ Գեոդեզիայի և քարտեզագրության ոլորտներում ռիսկի վրա հիմնված ստուգումներ անցկացնելու համար անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ կատարել ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության

տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1697-Ն որոշման մեջ և մշակել տվյալ ոլորտներին առնչվող ստուգաթերթեր:

Պետական մարմինների կողմից քաղաքացիների դիմում-բողոքներին ոչ պատշաճ ընթացք տալը, տնտեսվարող սուբյեկտների կողմից օրենսդրությանը հակասող վարքագիծ դրսևորելու դեպքերում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների անգործությունը կանխելու նպատակով ներկայացնել առաջարկ՝ իրավական դաշտում համապատասխան կարգավորումներ սահմանելու վերաբերյալ:

- Վերահսկողական աշխատանքների ծավալը և արդյունավետությունը անմիջականորեն կախված է հսկողություն իրականացնող *մասնագետների քանակից և արհեստավարժությունից,* հետևաբար անհրաժեշտություն կա վերապատրաստումների կազմակերպումից բացի, հաստիքացուցակով ավելացնել տվյալ բնագավառում հսկողություն իրականացնող մասնագետների քանակը:
- Տվյալ բնագավառում կատարվող աշխատանքների արդյունավետության մակարդակի բարձրացմանը կնպաստի անձնակազմի համալրումը տեխնիկական սարքերով (էլեկտրոնային տախեոմետր և GPS ռովեր կայան) աշխատելու ունակություններ ունեցող մասնագետներով:
- *Կանխարգելիչ և իրազեկման միջոցառումներ.* վերահսկողության ոլորտներում տնտեսավարող սուբյեկտների և հանրության իրազեկվածության մակարդակի շարունակական բարձրացման համատեքստում նախատեսվում է օգտագործել ԶԼՄ-ների և սոցիալական ցանցերի բոլոր հնարավորությունները, կազմակերպել իրազեկող բնույթի հանդիպում-քննարկումներ, տրամադրել անհրաժեշտ խորհրդատվություն:

Հավելված 1

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN	Միջոցառման անվանում	Ակնկալվող արդյունք	Կատարող	Համակատարող	Ժամկետ
1	2	3	4	5	6
	ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ				
1	Ուղևորափոխադրում իրականացնող տնտեսվարող սուբյեկտների մոտ տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների իրականացում	Առավել ռիսկային սուբյեկտների ռիսկայնության աստիճանի նվազեցում	Տարածքային ստորաբաժանումներ	Տրանսպորտային անվտանգության վարչություն	1-ին եռամսյակ՝ 9 ստուգում 2-րդ եռամսյակ՝ 7 ստուգում 3-րդ եռամսյակ՝ 8 ստուգում 4-րդ եռամսյակ՝ 10 ստուգում
2	Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների մոտ (մասնաճյուղերում) և իրենց պատկանող էներգատեղակայանքներում տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների իրականացում	Առավել ռիսկային սուբյեկտների ռիսկայնության աստիճանի նվազեցում	Տարածքային ստորաբաժանումներ	Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության վարչություն	1-ին եռամսյակ՝ 17 ստուգում 2-րդ եռամսյակ՝ 46 ստուգում 3-րդ եռամսյակ՝ 29 ստուգում 4-րդ եռամսյակ՝ 36 ստուգում
3	Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների (մասնաճյուղերում) և իրենց պատկանող էներգատեղակայանքների վերաբերյալ տվյալների բազաների ձևավորում	Էներգետիկայի բնագավառում ըստ ռիսկայնության առաջնորդվելու սկզբունքի ապահովում	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության վարչություն	Մինչև դեկտեմբերի 30-ը

4	Արտադրական նշանակության օբյեկտներում, բենզալցակայաններում, գազալցավորման կայաններում, առևտրի և հասարակական սննդի օբյեկտներում, պայթուցիկ նյութերի, նավթամթերքների, հեղուկ և բնական գազերի պահեստներում տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների իրականացում	Օբյեկտներում հրդեհների կանխարգելում և տեխնիկական անվտանգության մակարդակի բարձրացում	Տարածքային ստորաբաժանումներ	Տեխնիկական և հրդեհային անվտանգության վարչություն	1-ին եռամսյակ՝ 103 օբյեկտ 2-րդ եռամսյակ՝ 119 օբյեկտ 3-րդ եռամսյակ՝ 114 օբյեկտ 4-րդ եռամսյակ՝ 116 օբյեկտ
5	Նախակրթական հաստատություններում հրդեհատեխնիկական հետազոտությունների իրականացում	Նախակրթական հաստատություններում երեխաների անվտանգության մակարդակի բարձրացում	Տարածքային ստորաբաժանումներ	Տեխնիկական և հրդեհային անվտանգության վարչություն	Հուլիս-օգոստոս
6	Մանկական ամառային ճամբարներում հրդեհատեխնիկական հետազոտությունների իրականացում	Մանկական ամառային ճամբարներում հանգստացող երեխաների անվտանգության մակարդակի բարձրացում	Տարածքային ստորաբաժանումներ	Տեխնիկական և հրդեհային անվտանգության վարչություն	Մայիս-հունիս
7	Ստուգված տնտեսավարող սուբյեկտների հրդեհային և տեխնիկական անվտանգության վերաբերյալ տվյալների բազաների ձևավորում	Հրդեհային և տեխնիկական անվտանգության բնագավառում ըստ ռիսկայնության առաջնորդվելու սկզբունքի ապահովում	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	Տեխնիկական և հրդեհային անվտանգության վարչություն	Մինչև դեկտեմբերի 30-ը
8	Քաղաքաշինական տեսակետից առավել ռիսկային օբյեկտներում ստուգումների իրականացում	Առավել ռիսկային օբյեկտների ռիսկայնության աստիճանի նվազեցում	Տարածքային ստորաբաժանումներ	Քաղաքաշինական գործունեության վերահսկողության վարչություն	1-ին եռամսյակ՝ 124 օբյեկտ 2-րդ եռամսյակ՝ 201 օբյեկտ 3-րդ եռամսյակ՝ 219 օբյեկտ 4-րդ եռամսյակ՝ 213 օբյեկտ
9	Տարեկան ծրագրում ներառված մարզպետարանների աշխատակազմում տեսչական ստուգումների իրականացում	ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացում	Գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության վարչություն	Տարածքային ստորաբաժանումներ	1-ին եռամսյակ՝ 2 մարզպետարան 2-րդ եռամսյակ՝ 3 մարզպետարան 3-րդ եռամսյակ՝ 3 մարզպետարան 4-րդ եռամսյակ՝ 2 մարզպետարան
	ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ				

10	Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը	Տեսչական մարմնի բնականոն գործունեության ապահովում, վերահսկողական գործառույթների պատշաճ իրականացում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջան առության վարչություն	Ոլորտային կառուցվածքային ստորաբաժանում ներ	2-րդ եռամսյակ
11	Մասնակցություն «Տրանսպորտի վերահսկողության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակման աշխատանքներին	Տրանսպորտի ոլորտում վերահսկողության արդյունավետության բարձրացում՝ կիրառելի գործիքակազմի հստակեցմամբ	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջան առության վարչություն	Տրանսպորտի անվտանագությա ն վարչություն	2-րդ եռամսյակ
12	Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը	Քաղաքաշինական պետական վերահսկողական գործառույթների իրականացում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջան առության վարչություն	Քաղաքաշինակա ն գործունեության վերահսկողությա ն վարչություն	4-րդ եռամսյակ
13	Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը	Տեխնիկական անվտանգության ապահովման մակարդակի բարձրացում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջան առության վարչություն	Տեխնիկական և հրդեհային անվտանգության վարչություն	1-ին եռամսյակ
14	ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1697-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը	Ըստ ռիսկայնության առաջնորդվելու սկզբունքի ապահովում	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	Ոլորտային կառուցվածքային ստորաբաժանում ներ	4-րդ եռամսյակ
15	ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 08-ի Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության,	Վերահսկման բնագավառներում անվտանգության ապահովման նպատակով ստուգումների կազմակերպում և իրականացում	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	Ոլորտային կառուցվածքային ստորաբաժանում ներ	4-րդ եռամսյակ

	տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին թիվ 1025-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը				
16	ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի «Էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոններ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1933-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը	Էլեկտրատեղակայանքների անվտանգ շահագործման ռիսկերի նվազեցում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջան առության վարչություն	Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության վարչություն	3-րդ եռամսյակ
17	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից 2005 թվականի հուլիսի 8-ի «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններ» թիվ 95-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը	Ներտնային գազասպառման համակարգերի սպասարկման մակարդակի բարձրացում և մահացու ելքով պատահարների կանխարգելում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջան առության վարչություն	Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության վարչություն	3-րդ եռամսյակ
18	ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի ««Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 2399-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը	Ներտնային գազասպառման համակարգերի սպասարկման մակարդակի բարձրացում և մահացու ելքով պատահարների կանխարգելում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջան առության վարչություն	Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության վարչություն	3-րդ եռամսյակ
19	2006 թվականի նոյեմբերի 23-ի «Սպառողների էլեկտրատեղակայանքների տեխնիկական շահագործման կանոններ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1939-Ն կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը	Էլեկտրատեղակայանքներում համապատասխան մասնագետների մասնագիտական պատրաստվածության մակարդակի բարձրացում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջան առության վարչություն	Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության վարչություն	3-րդ եռամսյակ

20	ՀՀ քաղաքաշինության նախարարի հրամանը ՀՀՇՆ 30-10-2014 «Քաղաքաշինություն քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին 2014 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 263-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը	Քաղաքաշինական պետական վերահսկողական գործառույթների իրականացում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջան առության վարչություն	Քաղաքաշինական գործունեության վերահսկողության վարչություն	4-րդ եռամսյակ
21	ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11–ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 730-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը	Տեսչական մարմնի գործառույթների և ՏՄ ղեկավարի լիազորությունների հստակեցում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջան առության վարչություն	Կառուցվածքային ստորաբաժանումներ	2-րդ եռամսյակ
22	Տեսչական մարմնի վերահսկողությամբ արձանագրված իրավախախտումների արձանագրությունների, կարգադրագերերի լրամշակում ըստ ոլորտների	Համաչափ վարչարարության իրականացման ապահովում	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջան առության վարչություն	Ոլորտային կառուցվածքային ստորաբաժանումներ	1-ին եռամսյակ
	ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ				
32	ՀՀ ԲՈՒՀերի, դատարանների, այլ կառույցների հետ համագործակցության շրջանակում վերապատրաստումների կազմակերպում	Մասնագիտական պատրաստվածության մակարդակի բարձրացում	Կառուցվածքային ստորաբաժանումներ	-	Տարվա ընթացքում՝ հնարավորության դեպքում
33	Տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանումների դասընթացների կազմակերպում	Տեսչական մարմնի ներքին աշխատանքների կանոնակարգում, աշխատակիցների պատրաստվածության բարձրացում	Կառուցվածքային ստորաբաժանումներ	Որակի ապահովման վարչություն	Տարվա ընթացքում՝ ըստ անհրաժեշտության

Հավելված 2

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

N	Միջոցառման անվանումը	Արդյունք	Կատարող	Համակատարող	ժամկետ
1	Տեսչական մարմնի ղեկավարի, ղեկավարի տեղակալների, կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարների հետ մամուլի ասուլիսների, հարցազրույցների, ռեպորտաժների կազմակերպում և անցկացում	Տեսչական մարմնի և ԶԼՄ-երի ներկայացուցիչների միջև համագործակցության, հասարակության իրազեկման մակարդակի բարձրացում	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	Կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներ	Ասուլիս 1-ին և 3-րդ եռամսյակ։ Հարցազրույցներ և ռեպորտաժներ՝ 1-ին եռամսյակ 2-րդ եռամսյակ 3-րդ եռամսյակ 4-րդ եռամսյակ
2	ՔՏՀԱ Տեսչական մարմնի՝ -թեժ գծի սպասարկում, -սոցիալական ցանցերում պաշտոնական էջերի տեղեկատվական սպասարկում -պաշտոնական կայքէջի տեղեկատվական սպասարկում -YouTube-ի պաշտոնական ալիքի համալրում և սպասարկում	Տեսչական մարմնի գործունեության թափանցիկության ապահովում, տեղեկատվության հասանելիություն։ Արագ արձագանքման և հետադարձ կապի ապահովում	Իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին։	Կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներ	1-ին եռամսյակ 2-րդ եռամսյակ 3-րդ եռամսյակ 4-րդ եռամսյակ
3	Տեսչական մարմին ստացված դիմում-բողոքների, վարչական վարույթների, ահազանգերի, հարցումների (թեժ գծով և գրավոր) վիճակագրության վարում, ամփոփում, հրապարակում	Իրավիճակի համեմատական վերլուծության արդյունքում՝ առկա խնդիրների բացահայտում	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	Յուրաքանչյուր եռամսյակի ամփոփումից հետո 15 օրվա ընթացքում

4	Խորհրդատվական նյութերի և/կամ իրազեկման բուկլետների և բրոշյուրների կազմում, ձևավորում՝ ըստ ոլորտների. -տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտ. -քաղաքաշինության ոլորտ. -տրանսպորտի անվտանգության ոլորտ -էներգետիկայի և էներգասպառման ոլորտ -Գեոդեզիայի և հողօգտագործման ոլորտ	Տնտեսվարող սուբյեկտների և հասարակության շրջանում իրազեկման մակարդակի բարձրացում	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	Կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներ	1-ին եռամսյակ 2-րդ եռամսյակ 3-րդ եռամսյակ 4-րդ եռամսյակ
5	Ոլորտային իրազեկող և կանխարգելիչ բնույթի սոցիալական հոլովակների, մամուլի հաղորդագրությունների պատրաստում և տարածում	Տնտեսվարող սուբյեկտների և հասարակության շրջանում իրազեկման մակարդակի բարձրացում	Իրազեկման, հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	Կառուցվածքային ստորաբաժանումներ	1-ին եռամսյակ և 3-րդ եռամսյակ
6	Իրազեկում-հանդիպումների կազմակերպում Երևանում և ՀՀ մարզերում՝ մարզպետարանների, համայնքների ներկայացուցիչների, տնտեսվարող սուբյեկտների հետ՝ Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում առկա խնդիրները կարգավորելու, հետագայում դրանք բացառելու և կանոնակարգելու նպատակով	Տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության ապահովվում, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտների և հանրության իրազեկության մակարդակի բարձրացում իրենց իրավունքների և պարտականությունների մասին	Իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	Կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների ղեկավարների, ղեկավարի տեղակալների մասնակցությամբ	Յուրաքանչյուր եռամսյակ 2 կամ 3 հանդիպում
7	ՁԼՄ-ներում տեղ գտած վերահսկողության ոլորտին առնչվող և հանրային հետաքրքրություններ առաջացնող հրապարակումների մշտադիտարկում, հայտնաբերված հրապարակումների վերաբերյալ արագ արձագանքում(պատասխանատուների կողմից պատասխանի, հերքման և/կամ պարզաբանման ստացում և տարածում	Հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացում	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	Կառուցվածքային ստորաբաժանումներ	1-ին եռամսյակ 2-րդ եռամսյակ 3-րդ եռամսյակ 4-րդ եռամսյակ՝ ըստ մոնիթորինգի արդյունքում հայտնաբերված տվյալների